«Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ

Տարեկան ֆինանսական հաշվետվություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Ծանուցում

Սույն հաշվետվություններն ի սկզբանե պատրաստվել են հայերեն լեզվով, ինչից հետո թարգմանվել են անգլերեն՝ օգտագործողների հարմարության համար: Հայերեն և անգլերեն տարբերակների միջև անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում առաջնային պետք է համարել հայերեն տարբերակը:

Բովանդակություն

4	Անկախ աուդիտորի եզրակացություն
7	Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
8	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
9	Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
10	Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
11	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
12	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Կազմակերպական-իրավական ձևը՝	ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը՝	տրամադրել վարկեր, ներգրավել փոխառություններ
Գլխավոր տնօրեն՝	Խաչիկ Ներկարարյան

Հեռ.՝+37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Ավետիսյանի 23/6, 5-րդ հարկ, տարածք 7

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Միկրո Կապիտալ Հայաստան» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:
Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրեցրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:*
Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք),* և պահպանել ենք ՀՄԷՄԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 21-ի վրա, որը նկարագրում է հաշվետու ամսաթվից հետո COVID-19 տարածման հնարավոր ազդեցությունը ընկերության գործունեության վրա: Մեր կարծիքը չի ձևափոխվել այդ հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- նույնականացնում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա եզրակացնում ենք, թե արդյոք տեղին է հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառումը ղեկավարության կողմից և, թե՝ արդյոք առկա է էական անորոշություն՝ Ընկերության անընդհատ գործելու կարողությունը նշանակալի կասկածի տակ դնող դեպքերի կամ պայմանների հետ կապված: Եթե գտնում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները համարժեք չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագայում տեղի ունեցող դեպքերը կամ ի հայտ եկող հանգամանքները կարող են ստիպել կազմակերպությանը դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան
Տնօրեն

Գնել Խաչատրյան
Աուդիտի ղեկավար

28 ապրիլ, 2020թ.

ք. Երևան

«Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծան.	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	5	278,691	11,968
Տոկոսային և նմանատիպ ծախսեր		(80,929)	-
Զուտ տոկոսային եկամուտ		197,762	11,968
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		-	11,844
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		(2,879)	(607)
Արտարժութային գործարքներից զուտ կուրստ		(3,404)	(297)
Այլ գործառնական եկամուտ		2,921	7
Գործառնական եկամուտ		194,400	22,915
Վարկերից և այլ փոխառ. առաջացած կորուստներ, զուտ		(47,293)	(4,731)
Անձնակազմի գծով ծախսեր	6	(83,820)	(27,221)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	7	(61,869)	(19,845)
Ֆինանսական ծախսեր		(566)	-
Շահույթ/(վնաս) մինչև հարկվելը		852	(28,882)
Շահութահարկի գծով փոխհատուցում	8	6,308	1,355
Տարվա շահույթ/(վնաս)		7,160	(27,527)
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		7,160	(27,527)

Գլխավոր տնօրեն
Խաչիկ Ներկարարյան

Գլխավոր հաշվապահ
Լուսինե Մովսիսյան

«Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան.	31.12.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	16	50,318	217,210
Հաճախորդներին տրված վարկեր	9	1,468,720	311,690
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	10	17,810	12,569
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	15	11,127	-
Հետաձգված հարկային ակտիվ	11	8,191	1,355
Այլ ակտիվներ		5,191	5,060
Ընդամենը ակտիվներ		1,561,357	547,884
Պարտավորություններ			
Ստացված փոխառություններ	12	996,502	-
Այլ պարտավորություններ	13	14,224	5,411
		1,010,726	5,411
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	14	570,000	570,000
Կուտակված վնաս		(19,369)	(27,527)
		550,631	542,473
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ		1,561,357	547,884

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 7-44) հաստատվել են Միկրո Կապիտալ Հայաստան ՈՒՎԿ ՓԲԸ ղեկավարության կողմից 2020թ. ապրիլի 28-ին, ստորագրությամբ՝

Գլխավոր տնօրեն
Խաչիկ Ներկարարյան

Գլխավոր հաշվապահ
Լուսինե Մովսիսյան

«Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսներ	262,794	8,561
Վճարված տոկոսներ	(75,086)	-
Ստացված կոմիսիոն գումարներ	-	11,844
Վճարված կոմիսիոն գումարներ	(2,880)	(607)
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից	(2,238)	(174)
Այլ ստացված եկամուտ	2,921	7
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(83,820)	(24,979)
Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ	(55,844)	(18,987)
Ֆինանսական եկամուտ	556	-
Վճարված շահութահարկի գծով ծախս	6,308	(51)
Ֆինանսական վարձակալության վճար	(11,770)	-
Պահուստներ	(4,551)	-
Հաճախորդներին տրված վարկերի նվազում (ավելացում)	(1,179,438)	(313,086)
Այլ ակտիվների նվազում (ավելացում)	(5,969)	(5,060)
Այլ պարտավորությունների նվազում (ավելացում)	3,013	3,357
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(1,145,994)	(339,175)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(11,755)	(13,427)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական միջոցներ	(11,755)	(13,427)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Կանոնադրական կապիտալի համալրում	-	570,000
Ստացված փոխառություններ	991,215	-
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	991,215	570,000
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ (նվազում)/աճ	(166,534)	217,210
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(358)	(188)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	217,210	-
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում (ծան. 17)	50,318	217,210

«Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Կուտակ. վնաս հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
01.01.2018թ. դրությամբ			
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	570,000	-	570,000
Համապարփակ եկամուտ			
Շահույթ (վնաս) ժամանակաշրջանի համար	-	(27,526)	(27,526)
31.12.2018թ. դրությամբ	570,000	(27,526)	542,474
01.01.2019թ. դրությամբ			
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	570,000	(27,526)	542,474
ՖՀՄՍ 16-ի որդեգրման արդյունքը (ծան. 18)	-	3,170	3,170
Շահույթ (վնաս) ժամանակաշրջանի համար	-	4,987	4,987
31.12.2019թ. դրությամբ	570,000	(19,369)	550,631

«Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Ընկերության վերաբերյալ 12
2. Պատրաստման հիմունքներ 12
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ 13
4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում 15
5. Զուտ տոկոսային եկամուտ 23
6. Անձնակազմի գծով ծախսեր 23
7. Վարչական ծախսեր 24
8. Շահութահարկի գծով ծախս 24
9. Վարկեր հաճախորդներին 24
10. Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ 27
11. Հետաձգված հարկային ակտիվ 27
12. Ստացված փոխառություններ 29
13. Այլ պարտավորություններ 30
14. Կանոնադրական կապիտալ 31
15. Վարձակալություն 31
16. Պայմանական պարտավորություններ 33
17. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությանը կից ծանոթագրություններ 33
18. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետևանքներ 33
19. Գործարքներ կապակցված կողմերի հետ 36
20. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն 36
21. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր 42
Հավելված Ա. Իրական արժեքի չափման բացահայտումներ 44

1. Ընկերության վերաբերյալ

«Միկրո Կապիտալ Հայաստան» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 2018 թվականին: Ընկերությունը հանդիսանում է միջազգային ընկերությունների խմբի անդամ: Ընկերության հիմնական ուղղությունը փոքր և միջին բիզնեսի վարկավորումն է:
Ընկերության գործունեության հիմնական նպատակն է օժանդակել Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին բիզնեսի զարգացմանը:

Ընկերության միակ մասնակիցը Mikro Kapital Sarl-ն է:

Ընկերության գրասենյակը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Պարոնյան 8 թիվ 1 տարածքում:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա տվյալներով կազմել է 14 մարդ (9 մարդ 2018թ.-ին):

Հայաստանի գործարար միջավայր

Կազմակերպությունը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Կազմակերպության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ:
Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են ղեկավարության գնահատականը Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 20-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ-ներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման

նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա. 2019թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

- ՖՀՄՍ 16 "Վարձակալություն";
- ՖՀՄՄԿ 23 "Շահութահարկի հաշվառման մոտեցման անորոշություն":

Նշվածների ազդեցություն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա ներկայացված է ծանոթագրություն 15-ում:

բ) Նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել

Առկա չեն նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Ընկերության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրումների պատճառ հանդիսանալ:

<u>Գնահատումներ և ենթադրություններ</u>

Վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկում

Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ դրանք արժեզրկման տեսանկյունից գնահատելու համար: Ընկերության վարկերի արժեզրկման պահուստները սահմանվում են վարկերի և դեբիտորական պարտքերի պորտֆելում առաջացած արժեզրկումից կորուստները ճանաչելու նպատակով: Ընկերությունը վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստին կատարվող հատկացումների վերաբերյալ գնահատումները դիտարկում է որպես գնահատման անորոշությունների հիմնական աղբյուր, որովհետև ա) դրանք բավականին զգայուն են մի ժամանակաշրջանից մյուսը տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, քանի որ հիմնված են չվճարումների չափերի և ապագա կորուստների գնահատման վերաբերյալ ենթադրությունների վրա, որոնք կատարվել են անցյալ գործունեության փորձի հիման վրա և բ) ցանկացած զգալի տարբերություն Ընկերության կողմից գնահատված կորուստների և

դրանց փաստացի չափերի միջև կհանգեցնի անհրաժեշտության, որ Ընկերությունը գրանցի հավելյալ պահուստներ, որոնք կարող են ունենալ նշանակալի ազդեցություն նրա ապագա ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների վրա: 2019 դեկտեմբերի 31-ի դրությամբ համախառն վարկերը և պահուստը ներկայացված են ծանոթագրություն 9-ում:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:
Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)*

- *Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*

- *Մակարդակ 3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

Վարձակալություն

- Վարձակալության ժամկետի որոշումը որոշ վարձակալությունների դեպքում, երբ Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ, ներառյալ՝ արդյո՛ք Ընկերության խելամտորեն համոզված է վարձակալության գծով օպցիոնները կիրառելու (ծնթ.14.) :
- Վարձակալության գծով պարտավորության գեղչման տոկոսադրույքի որոշումը (ծնթ.14) :

Բոլոր վարձակալությունները հաշվառվում են ճանաչելով Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը, բացառությամբ.

- Ցածրարժեք ակտիվների վարձակալությունը, և
- Մինչև 12 ամիս կամ ավելի կարճ ժամկետով վարձկալությունը:

ՖՀՄՍ 16 կիրառվել է 01.01.2019թ.-ից առանց վերաներկայացնելու համադրելի ցուցանիշները:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է Վարձատունին վարձակալության ժամկետի ընթացքում վճարվելիք պայմանագրային վճարների ներկա արժեքով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույթը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, Ընկերությունը կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Փոփոխական վարձավճարները ներառվում են պարտավորության

չափման մեջ, եթե նրանք կախված են գործակցից կամ ինդեքսից: Նման դեպքերում, վարձակալության պարտավորության սկզբանական չափման մեջ ենթադրվում է, որ այդ փոփոխական տարրը կմնա անփոփոխ վարձակալության ողջ ժամկետի ընթացքում: Մնացած փոփոխական ծախսերը ծախսագրվում են նրանց առաջացման ժամանակաշրջանում:

Սկզբնական ճանաչումից հետո վարձակալության գծով պարտավորությունը ավելացվում է մնացորդային արժեքի նկատմամբ տոկոսային ծախսով և նվազեցվում է կատարված վճարումների չափով:
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը ամորտիզացվում է ուղիղ-գծային մեթոդով՝ վարձակալության մնացորդային ժամկետի ընթացքում կամ հիմքային ակտիվի տնտեսական օգտագործման ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է վարձակալության ժամկետից:

4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել ֆինանսական գործիքներին վերաբերող հետևյալ ռիսկերին՝

- Վարկային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ,
- Արտարժութային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Հաճախորդներին տրված վարկեր
- Դեբիտորական պարտքեր
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր
- Ստացված փոխառություններ

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների

Ֆինանսական ակտիվներ չափվող ամորտիզացված արժեքով

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	1,468,720	311,690
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	50,318	217,210
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4,284	5,058
	1,523,322	533,958

Ֆինանսական պարտավորություններ չափվող ամորտիզացված արժեքով

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Ստացված փոխառություններ	996,502	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,237	1,758
	999,739	1,758

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, հաճախորդներին տրված վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, ինչպես նաև ստացված վարկերը և փոխառությունները:
Դրամական միջոցների և դրանց համարժեքների, առևտրային և այլ դեբիտորական պարտքերի, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:
Հավելված Ա-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և վարկերի ու փոխառությունների իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ:
Զգալի ֆինանսական վնասներից խուսափելու համար Ընկերությունը կիրառում է տարբեր մեթոդներ վարկային ռիսկերը որոշելու և արդյունավետորեն կառավարելու նպատակով:
Ռիսկերի կառավարումը և մոնիտորինգն իրականացվում է սահմանված լիազորությունների շրջանակներում: Այս գործընթացներն իրականացվում են Վարկային կոմիտեների և վարկային կազմակերպության խորհրդի կողմից:

Վարկային կոմիտե ներկայացվող տեղեկատվությունը վարկային մասնագետի կողմից հաճախորդի նախնական հայտի, նրա բիզնեսի և վարկային ռիսկերի պատշաճ ուսումնասիրության հիման վրա կատարված նախնական վերլուծական տեղեկություններ են, որոնց ճշգրտությունը համեմատական եղանակով ստուգում է նաև վարկային կառավարիչը, վարկային մասնագետի և վարկային կառավարիչի պատասխանատվությամբ: Ի վերջո Վարկային կոմիտեի անդամները գնահատում են հայտի համապատասխանությունը սահմանված չափանիշներին (դիմողի վարկային պատմությունը, ֆինանսական վիճակը, մրցակցային ունակությունը և այլն):

Վերանայված պայմաններով վարկեր

Վերանայված պայմաններով վարկերն իրենցից ներկայացնում են վարկեր, որոնք վերակառուցվել են՝ վարկառուի ֆինանսական դրության վատթարացման արդյունքում, և Ընկերությունը կատարել է զիջումներ, որոնք այլապես չէր դիտարկի: Վարկի վերակառուցման դեպքում այն մնում է այդ խմբում անկախ նրանից, որ վերակառուցումից հետո դրա կատարողականը եղել է բավարար:

Արժեզրկման պահուստ

Ընկերությունը սահմանում է պահուստ արժեզրկումից կորուստների գծով, որն իրենից ներկայացնում է վարկային պորտֆելում կրած վնասների գնահատումը: Այս պահուստի հիմնական բաղկացուցիչը իրենից ներկայացնում է վարկերի գծով կորուստների խմբակային պահուստ, որը սահմանված է Ընկերության համասեռ ակտիվների գծով՝ կապված այն վնասների հետ, որոնք հաշվեգրվել են, սակայն չեն վերագրվել վարկերին:

Վարկային ռիսկի առավելագույն չափը

Ընկերության վարկային ռիսկի առավելագույն չափը զգալիորեն տատանվում է և կախված է և անհատական ռիսկերից, և ընդհանուր շուկայական տնտեսության ռիսկերից: Հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով առավելագույն ռիսկը հավասար է այդ ակտիվների հաշվեկշռային արժեքին նախքան որևէ հաշվանցում կամ գրավի ազդեցություն հաշվի առնելը:
Ստորև ներկայացված է պարտքային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	1,468,720	311,690
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	50,318	217,210
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4,284	5,058
	1,523,322	533,958

Վերոնշյալ հաշվեկշռային արժեքները լավագույն կերպով ներկայացնում են վարկային ռիսկի առավելագույն չափը՝ նաև հաշվի առնելով ձեռք բերված ապահովության միջոցները կամ անձնական երաշխիքները: Վարկային ռիսկի ենթարկվածությունը կրճատելու նպատակով ակտիվների և պարտավորությունների հնարավոր զտման ազդեցությունն էական չէ: Հաճախորդներին տրված վարկերի գծով հաճախորդներին տրված վարկերի վերլուծությունը և վարկային ռիսկի համակենտրոնացումը հաճախորդներին տրված վարկերի գծով ներկայացված է ծանոթագրություն 10- ում:

Հետհաշվեկշռային ռիսկ

Ընկերությունը սկզբունքայնորեն կիրառում է միևնույն ռիսկերի կառավարման քաղաքականությունը հետհաշվեկշռային ռիսկերի համար, ինչը կիրառում է հաշվեկշռային ռիսկերի համար:

Աշխարհագրական կենտրոնացում

Ընկերության ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական կենտրոնացումը սահմանափակվում է Հայաստանի Հանրապետության տարածքով:

Դրամական միջոցներ բանկում և կարճաժամկետ ավանդներ

Ընկերությունը գտնում է, որ դրամական միջոցների կորստի ռիսկը կարելի է համարել աննշան՝ քանի որ Ընկերության կողմից միջոցների տեղաբաշխման համար ընտրված ֆինանսական հաստատությունները վստահելի են և հեղինակավոր:

Զգալի դրամական միջոցներ պահվում են հետևյալ հաստատություններում

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Բանկ 1	47,274	123,010
Բանկ 2	3,044	94,200
	50,318	217,210

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժութային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է՝ տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժութային փոխարժեքի (արտարժութային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Իրական արժեքի և դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Կազմակերպությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գծով գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

<u>Տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծություն</u>

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծության մոնիտորինգի միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

	Մինչև 3 ամիս հազ. դրամ	3-ից 6 ամիս հազ. դրամ	6-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ	Հաշվեկշռ. Արժեք հազ. դրամ
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
Ակտիվներ						
Դրամ. միջոցներ և բանկային հաշ.	217,210	-	-	-	-	217,210
Հաճախորդ. տրված վարկեր և փոխ.	33,994	36,757	62,892	178,047	-	311,690
	251,204	36,757	62,892	178,047	-	528,900

	Մինչև 3 ամիս հազ. դրամ	3-ից 6 ամիս հազ. դրամ	6-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ	Ժամկետ անց հազ. դրամ	Հաշվեկշռ. Արժեք հազ. դրամ
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
Ակտիվներ							
Դրամ. միջոցներ և բանկային հաշ.	50,318	-	-	-	-	-	50,318
Հաճախորդ. տրված վարկեր և փոխ.	203,304	182,637	334,317	737,088	1,935	9,439	1,468,720
	253,622	182,637	334,317	737,088	1,935	9,439	1,519,038
Պարտավորություններ							
Ստացված փոխառություններ	-	-	-	2,817	993,685	-	996,502
	253,622	182,637	334,317	734,271	(991,750)	9,439	522,536

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Ընկերության տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2019 Միջին արդյունավետ տոկոսադրույք		2018 Միջին արդյունավետ տոկոսադրույք	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Տոկոսակիր ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր	35.10%	25.28%	39.45%	28.92%
Տոկոսային պարտավորություններ				
Ստացված փոխառություններ	18.26%	11.34%	-	-

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության առանձին կազմակերպությունների գործարքներն արտահայտված են վերջիններիս գործառնական արժույթից տարբեր արժույթով:

Ընկերության արտարժութային ռիսկը հիմնականում առաջանում է ԱՄՆ դոլարով ստացված վարկերի հետ կապված փոխարժեքային փոփոխություններից, ինչի արդյունքում Ընկերությունը կարող է կրել նշանակալի վնասներ: Այս ռիսկն, ըստ էության, Ընկերության կողմից չի կառավարվում՝ հաշվի առնելով դրա կառավարման հետ կապված ծախսերը և նման ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ գործիքակազմի բացակայությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2019	2018
	հազ. դրամ	հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6,281	5,218
Հաճախորդներին տրված վարկեր	597,583	53,286
Ընդամենը ակտիվներ	603,864	58,504
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Վարկեր և փոխառություններ	341,581	-
Ընդամենը պարտավորություններ	341,581	-
Զուտ դիրքը	262,283	58,504

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունն իրականացվել է զուտ հիմունքով՝ առանց հարկերը հաշվի առնելու և հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Կազմակերպությունը դիտարկում է որպես հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2019	2018
ԱՄՆ դոլարի 10% արժեզրկում ՀՀ դրամի նկատմամբ	26,228	5,850

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կունենար զումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցություն վերը նշված զումարների վրա պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող սեփական միջոցների կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական զումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն՝ ըստ հաշվեկշռային հոդվածների ներկայացվում է ստորև:

31 դեկտեմբերի 2018թ.	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավել	Ժամկետանց	Անժամկետ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և բանկային հաշ	217,210	-	-	-	-	-	-	217,210
Հաճախորդներին տրված վարկեր	10,838	23,155	99,649	178,047	-	-	-	311,690
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	-	12,169	12,169
Հետաձգված հարկային ակտիվ	-	-	-	-	-	-	1,355	1,355
Այլ ակտիվներ	5,060	-	-	-	-	-	-	5,060
Ընդամենը ակտիվներ	233,108	23,155	99,649	178,047	-	-	13,524	547,484
Պարտավորություններ								
Այլ պարտավորություններ	3,169	-	-	2,242	-	-	-	5,411
Ընդամենը պարտավորություններ	3,169	-	-	2,242	-	-	-	5,411
Զուտ դիրք	229,939	23,155	99,649	175,805	-	-	13,524	542,073

31 դեկտեմբերի 2019թ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավել	Ժամկետանց	Անժամկետ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և բանկային հաշ	50,318	-	-	-	-	-	-	50,318
Հաճախորդներին տրված վարկեր	72,077	131,227	516,954	737,088	1,935	9,439	-	1,468,720
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	-	28,937	28,937
Հետաձգված հարկային ակտիվ	-	-	-	-	-	-	8,191	8,191
Այլ ակտիվներ	5,191	-	-	-	-	-	-	5,191
Ընդամենը ակտիվներ	127,586	131,227	516,954	737,088	1,935	9,439	37,128	1,561,357
Պարտավորություններ								
Ստացված փոծառություններ	-	-	-	2,817	993,685	-	-	996,502
Այլ պարտավորություններ	6,703	-	-	7,522	-	-	-	14,225
Ընդամենը պարտավորություններ	6,703	-	-	10,339	993,685	-	-	1,010,727
Զուտ դիրք	120,883	131,227	516,954	726,749	(991,750)	9,439	37,128	550,630

Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու Ընկերության գործունեության անընդհատության սկզբունքը միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրաված և սեփական միջոցների մնացորդների օպտիմալացման ճանապարհով: ՀՀ կենտրոնական բանկը Ընկերության համար սահմանում և վերահսկում է կապիտալի պահանջները: Ըստ ՀՀ ԿԲ կողմից սահմանված՝ ներկայումս գործող կապիտալի պահանջների, ունիվերսալ վարկային կազմակերպությունները 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետք է ապահովեն 150,000 հազար ՀՀ դրամ նվազագույն ընդհանուր կապիտալ: Հետևյալ աղյուսակը վերլուծում է Ընկերության կապիտալ ռեսուրսները կապիտալի համարժեքության նպատակներով:

5. Զուտ տոկոսային եկամուտ

	2019 հազ. դրամ	2018 հազ. դրամ
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	277,045	6,595
Ժամկետային ավանդներ, ցպահանջ հաշիվներ բանկերում	1,646	5,373
	278,691	11,968
Տոկոսային ծախս		
Ստացված փոխառություններ	80,929	-
	80,929	-
Զուտ տոկոսային եկամուտ	197,762	11,968

6. Անձնակազմի գծով ծախսեր

	2019 հազ. դրամ	2018 հազ. դրամ
Աշխատավարձ	82,899	26,910
Այլ հատուցումներ	921	311
	83,820	27,221

Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Ընկերության գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար, ներառյալ Ընկերության տնօրենը, բիզնեսի զարգացման բաժնի ղեկավար: Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրության հետ կապված ծախսումները ներկայացվում են ստորև:

	2019 հազ. դրամ	2018 հազ. դրամ
Աշխատավարձ, այլ հատուցումներ	43,224	16,741

7. Վարչական ծախսեր

	2019 հազ. դրամ	2018 հազ. դրամ
Վարձակալություն	12,882	4,300
Գովազդ, ներկայացուցչական	12,818	4,376
Աուդիտ, խորհրդատվություն	11,065	4,200
Չփոխհատուցվող հարկեր, տուրքեր	10,204	1,123
Մաշվածություն, ամորտիզացիա	8,454	858
Ստացված ծառայություններ	2,344	3,162
Հաղորդակցություն	1,247	333
Գրասենյակային ծախսեր	1,045	452
Այլ ծախսեր	1,810	1,041
	61,869	19,845

8. Շահութահարկի գծով ծախս

	2019 հազ. դրամ	2018 հազ. դրամ
Հարկային ծախս		
Ընթացիկ հարկային ծախսեր		
Ընթացիկ ժամանակաշրջանի շահութահարկ	-	-
Ընդամենը ընթացիկ հարկ	-	-
Հետաձգված հարկային ծախս		
Ժամանակավոր տարբերությունների ծագումը և հակադարձումը (ծան. 11)	6,308	1,355
Հետաձգված հարկային ծախս	6,308	1,355
Ընդամենը հետաձգված հարկային ծախս/ (եկամուտ)	6,308	1,355

9. Վարկեր հաճախորդներին

	2019 հազ. դրամ	2018 հազ. դրամ
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	1,510,860	316,370
Վարկերի արժեզրկման պահուստ	(42,140)	(4,680)
	1,468,720	311,690

Տրամադրված վարկերի վերլուծություն ըստ դասերի

	2019 հազ. դրամ	2018 հազ. դրամ
Առևտուր	680,632	153,652
Արդյունաբերություն	129,872	49,031
Փոխադրումներ, պահեստային տնտեսություն	128,354	13,880
Կեցության և հանրային սննդի կազմակերպում	83,851	7,399
Առողջապահություն	35,665	2,272
Շինարարություն	31,891	-
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	4,637	1,810
Մշակույթ և տուրիզմ	3,498	-
Տեղեկատվություն և կապ	-	4,916
Տնտեսության այլ ճյուղեր	370,320	78,730
	1,468,720	311,690

Ստորև բերվող աղյուսակն ամփոփում է հաճախորդներին տրված վարկերի հաշվեկշռային արժեքն՝ ըստ Ընկերության կողմից ստացված ապահովվածության տեսակի 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

	2019 հազ. դրամ	2018 հազ. դրամ
Երաշխավորություն	1,036,601	263,859
Փոխադրամիջոցների գրավ	375,038	4,703
Այլ գույքի գրավ	30,632	14,535
Չապահովված	26,449	28,593
	1,468,720	311,690

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված բոլոր վարկերը (ամբողջ պորտֆելը՝ 100%) տրվել են Հայաստանի Հանրապետությունում գործող անհատներին և կազմակերպություններին, որը ցույց է տալիս, որ առկա է նշանակալի աշխարհագրական համակենտրոնացում մեկ շրջանում:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է վարկերի արժեզրկման շարժը՝

	2019 հազ. դրամ	2018 հազ. դրամ
Սկզբնական մնացորդ	(4,680)	-
Զուտ (հակադարձում)/ծախս	(54,569)	(4,680)
Զուտ դուրսգրումներ	17,109	-
Վերջնական մնացորդ	(42,140)	(4,680)

Ստորև ներկայացված է 2019թ-ի և 2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային պորտֆելի որակի վերաբերյալ վերլուծությունը համաձայն ՀՀՄՍ 39-ի՝

	2019 հազ. դրամ			2018 հազ. դրամ		
	Համախառն	Պահուստ	Զուտ գումար	Համախառն	Պահուստ	Զուտ գումար
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	1,466,000	25,698	1,440,302	316,370	4,680	311,690
Արժեզրկված վարկեր՝						
1-ից 30 օր ժամկետանց	5,512	544	4,968	-	-	-
31-ից 60 օր ժամկետանց	9,116	1,531	7,585	-	-	-
60-ից 90 օր ժամկետանց	7,154	2,289	4,865	-	-	-
Default (90 օր ժամկետանց)	23,078	12,078	11,000	-	-	-
	1,510,860	42,140	1,468,720	316,370	4,680	311,690

Ստորև աղյուսակը ամփոփում է վարկի մնացորդների շարժը

	2019 հազ. դրամ			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Սկզբնական մնացորդ	316,370	-	-	316,370
Փոխանցում Փուլ 1	-	-	-	-
Փոխանցում Փուլ 2	(4,749)	4,749	-	-
Փոխանցում Փուլ 3	(36,221)	-	36,221	-
Վնասի զծով պահուստի զուտ վերաչափում	(161,301)	-	16	(161,285)
Ստեղծված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	1,357,413	4,367	6,073	1,367,853
Դուրսգրումներ	-	-	(12,078)	(12,078)
Վերջնական մնացորդ	1,471,512	9,116	30,232	1,510,860

Ստորև ակնկալվող վարկի կորստի (ECL) մնացորդը յուրաքանչյուր փուլով՝

	2019 հազ. դրամ			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Սկզբնական մնացորդ	4,680	-	-	4,680
Փոխանցում Փուլ 1	-	-	-	-
Փոխանցում Փուլ 2	(940)	940	-	-
Փոխանցում Փուլ 3	(12,374)	-	12,374	-
Վնասի զծով պահուստի զուտ վերաչափում	3,880	-	(1,605)	2,275
Ստեղծված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	20,524	591	1,992	23,107
Դուրսգրումներ	10,472	-	1,606	12,078
Վերջնական մնացորդ	26,242	1,531	14,367	42,140

10. Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ

	Համա-կար. սարք. հազ. դրամ	Տնտեսա-կան գույք հազ. դրամ	Այլ հազ. դրամ	Ոչ նյութ. ակտիվներ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Սկզբնական արժեք					
1 հունվարի 2018թ.	-	-	-	-	-
Ավելացումներ	2,596	1,976	3,862	4,993	13,427
31 դեկտեմբերի 2018թ.	2,596	1,976	3,862	4,993	13,427
1 հունվարի 2019թ.	2,596	1,976	3,862	4,993	13,427
Ավելացումներ	2,204	1,100	1,219	6,453	10,976
31 դեկտեմբերի 2019թ.	4,800	3,076	5,081	11,446	24,403
Կուտակված մաշվածություն					
1 հունվարի 2018թ.	-	-	-	-	-
Մաշվածություն	417	109	161	171	858
31 դեկտեմբերի 2018թ.	417	109	161	171	858
1 հունվարի 2019թ.	417	109	161	171	858
Մաշվածություն	3,373	637	763	962	5,735
31 դեկտեմբերի 2019թ.	3,790	746	924	1,133	6,593
Զուտ հաշվեկշռ. արժեք					
1 հունվարի 2018թ.	-	-	-	-	-
31 դեկտեմբերի 2018թ	2,179	1,867	3,701	4,822	12,569
31 դեկտեմբերի 2019թ.	1,010	2,330	4,157	10,313	17,810

11. Հետաձգված հարկային ակտիվ

	2019 հազ. դրամ	2018 հազ. դրամ
Մնացորդ առ 1-ը հունվարի	1,355	-
Շահույթում կամ վնասում ճանաչված հարկային ծախսեր	6,308	1,355
(Այլ համապարփակ եկամտում ճանաչված (վնասներ) օգուտներ	528	-
Մնացորդ առ 31-ը դեկտեմբերի	8,191	1,355

Հետաձգված հարկային ակտիվների, շահույթում կամ վնասում ճանաչված գումարների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված գումարների մանրամասները ներկայացված են ստորև.

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

	Մնացորդ	Ակտիվ	Պարտավոր-ություն	Զուտ	(Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	(Հաշվեգրված)/ նվազեցված սեփական կապիտալի հաշվին
	հազ. դրամ 2018	հազ. դրամ 2019	հազ. դրամ 2019	հազ. դրամ 2019	հազ. դրամ 2019	հազ. դրամ 2019
Արդյունավետ տոկոսադրույքով տոկոսային եկամուտների հաշվեգրում	1,037	891	-	891	(146)	-
Հաճախորդներին տրամադրված վարկեր	304	1,559	-	1,559	1,254	-
Արձակուրդային պահուստ	448	1,354	-	1,354	906	-
Դրամական միջոցներ	(434)	-	-	-	434	-
Վարձակալություն	-	2,054	-	2,054	1,526	528
Հարկային վնաս	-	2,333	-	2,333	2,333	-
Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	1,355	8,191	-	8,191	6,308	528

12. Ստացված փոխառություններ

Վարկերի և փոխառությունների հաշվեկշռային արժեքը հետևյալն է:

	2019 հազ. դրամ	2018 հազ. դրամ
Վարկեր բանկերից (ապահովված)	196,819	-
Փոխառություններ կապակցված կողմերից (չապահովված)	799,683	-
	996,502	-

Վարկեր բանկերից

Ընկերությունը վարկային պայմանագիր է կնքել ֆինանսական հաստատության հետ՝ որոշակի գործողության ժամկետով: Վարկային միջոցը ապահովված է Ընկերության կողմից թողարկված հասարակ անվանական բաժնետոմսերով (ծան. 14):

Վերոնշյալ պայմանավորվածությամբ Ընկերությունը ստացել է երկու վարկ:

200,000 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ առաջին վարկը ստացվել է 2019 թվականի մարտի 18-ին 10.0% հաստատուն տոկոսադրույքով և 03.03.2022թ մարման ժամկետով: Մնացորդային արժեքը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 95,940 հազար դրամ:

100,000 հազար դրամ արժողությամբ երկրորդ վարկը ստացվել է 2019 թվականի ապրիլի 3-ին 13.0% հաստատուն տոկոսադրույքով և 03.03.2020թ մարման ժամկետով: Մնացորդային արժեքը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 100,000 հազար դրամ:

Բոլոր բանկային վարկերի իրական արժեքները մոտ են իրենց հաշվեկշռային արժեքներին:

Փոխառություններ

Ընկերությունը ստացել է մի շարք փոխառություններ կապակցված կողմերից (ծան. 19):

36,000 հազար դրամ արժողությամբ առաջին փոխառությունը ստացվել է 2019 թվականի մայիսի 30-ին 14.0% հաստատուն տոկոսադրույքով և 20.05.2021թ. մարման ժամկետով: Մնացորդային արժեքը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 36,000 հազար դրամ:

40,000 ԱՄՆ դոլար արժողությամբ երկրորդ փոխառությունը ստացվել է 2019 թվականի օգոստոսի 2-ին 11.0% հաստատուն տոկոսադրույքով և 02.08.2021թ. մարման ժամկետով: Մնացորդային արժեքը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 19,188 հազար դրամ:

10,000 հազար դրամ արժողությամբ երրորդ փոխառությունը ստացվել է 2019 թվականի օգոստոսի 2-ին 14.0% հաստատուն տոկոսադրույքով և 02.08.2021թ. մարման ժամկետով: Մնացորդային արժեքը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 10,000 հազար դրամ:

100,000 ԱՄՆ դոլար արժողությամբ չորրորդ փոխառությունը ստացվել է 2019 թվականի հունիսի 18-ին 11.5% հաստատուն տոկոսադրույքով և 18.06.2021թ. մարման ժամկետով: Մնացորդային արժեքը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 47,970 հազար դրամ:

175,000 հազար դրամ արժողությամբ հինգերորդ փոխառությունը ստացվել է 2019 թվականի հոկտեմբերի 28-ին 20.0% հաստատուն տոկոսադրույքով և 28.09.2020թ. մարման ժամկետով: Մնացորդային արժեքը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 165,856 հազար դրամ:

100,000 հազար դրամ արժողությամբ վեցերորդ փոխառությունը ստացվել է 2019 թվականի նոյեմբերի 27-ին 20.0% հաստատուն տոկոսադրույքով և 27.10.2020թ. մարման ժամկետով: Մնացորդային արժեքը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 97,381 հազար դրամ:

418,325 հազար դրամ արժողությամբ վեցերորդ փոխառությունը ստացվել է 2019 թվականի դեկտեմբերի 16-ին 20.0% հաստատուն տոկոսադրույքով և 16.11.2020թ. մարման ժամկետով: Մնացորդային արժեքը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 418,325 հազար դրամ:

Բոլոր փոխառությունների իրական արժեքները մոտ են իրենց հաշվեկշռային արժեքներին:

Ստորև բերված աղյուսակը մանրամասն ներկայացնում է ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների փոփոխությունները, ներառյալ ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ փոփոխություններ: Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունները այն պարտականություններն են, որոնց համար եղել են կամ ապագայում սպասվում են դրամական միջոցների հոսքեր, որոնք Ընկերության դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության մեջ դասակարգվում են որպես ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսք:

	2019 հազ. դրամ	2018 հազ. դրամ
Սկզբնական մնացորդ	-	-
Դրամական հոսքեր		
Հոսքեր ստացված փոխառություններից	1,560,809	-
Փոխառությունների մարումներ	(569,464)	-
Տոկոսի մարումներ	(75,086)	-
	916,259	-
Ոչ դրամական հոսքեր		
Տոկոսի հաշվեգրում	80,929	-
Արտարժույթի վերագնահատման արդյունքը	(686)	-
	80,243	-
Վերջնական մնացորդ	996,502	-

13. Այլ պարտավորություններ

	2019 հազ. դրամ	2018 հազ. դրամ
Աշխատավարձի գծով պահուստ	7,522	2,242
Կրեդիտորական պարտքեր մատակարարներին	3,237	1,758
Պարտավորությունների բյուջեի նկատմամբ	3,465	1,411
	14,224	5,411

Որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ դասակարգված առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի իրական արժեքը հաշվեկշռային արժեքից էականորեն չի տարբերվում:

14. Կանոնադրական կապիտալ

Ընկերությունն ունի մեկ մասնակից՝ Mikro Kapital Sarl (գրանցված Լյուքսեմբուրգի Հանրապետությունում):

15. Վարձակալություն

Բոլոր վարձակալությունները հաշվառվել են օգտագործման իրավունքի ձևով ակտիվի և վարձակալական պարտավորության ճանաչման միջոցով, բացառությամբ՝

- վարձակալությունների, որոնց հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է, և
- կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս և պակաս ժամկետով)

Ընկերությունը ՖՀՄՍ 16-ին անցումը կատարել է 2019թ. հունվարի 1-ին առանց համեմատելի տվյալների վերաներկայացման: 2019թ. հունվարի 1-ի դրությամբ կիրառված անցումային պահանջների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 17-ում: Ներքո բերված քաղաքականությունը կիրառելի է ՖՀՄՍ 16-ի առաջին որդեգրմանը հաջորդող ժամանակաշրջանի համար:

Վարձակալական պարտավորությունները չափվում են վարձակալության ժամկետի ընթացքում կատարվող պայմանագրային վարձավճարների ներկա արժեքով, զեղչված վարձակալությամբ ենթադրվող դրույքով, եթե այդ դրույքը հնարավոր է հեշտությամբ որոշել: Եթե ոչ (սովորաբար պատահող դեպքեր), հաշվարկը կատարվում է կիրառելով վարձակալի կողմից լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման դրույքով: Վարձակալության փոփոխուն վճարումները ներառվում են վարձակալական պարտավորության հաշվարկում միայն եթե նրանք կախված են ինդեքսից կամ դրույքից: Այս դեպքում վարձակալական պարտավորության սկզբնական չափումը ենթադրում է այն, որ փոփոխուն մասը մնալու է կայուն վարձակալական ժամկետի ընթացքում: Այլ վարձակալական փոփոխուն վճարումները համարվում են ժամանակաշրջանի ծախսեր:

Սկզբնական ճանաչման ամսաթվին վարձակալական պարտավորության հաշվեկշռային արժեքը ներառում է նաև.

- գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո,
- գնման օպցիոնի իրագործման գին, եթե վարձակալը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը,
- վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է վարձակալի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սկզբնապես չափվում են վարձակալական պարտավորության չափով, հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները և գումարած հետևյալը.

- վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները
- վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, և

- այն ծախսումների գնահատականը, որը վարձակալը կկրի հիմքում ընկած ակտիվն ապամոնտաժելիս կամ քանդելիս:

Մեկնարկի ամսաթվից հետո, վարձակալական պարտավորությունը աճում է մնացորդը վրա հաշվարկված տոկոսագումարների չափով և նվազում է վարձակալի կողմից կատարված վարձավճարների չափով: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի կամ ակտիվների օգտակար ծառայության ժամկետի (եթե վերջինս ավելի կարճ է, քան վարձակալության ժամկետը) ընթացքում:

Երբ Ընկերությունը վերանայում է վարձակալության ժամկետի իր գնահատականը (օրինակ՝ Ընկերությունը վերագնահատում է վարձակալի կողմից վարձակալության ժամկետի երկարացման կամ վաղաժամ դադարեցման հավանականությունը), Ընկերությունը ճշգրտում է վարձակալական պարտավորության հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու կատարվող վարձավճարները վերանայված ժամկետի ընթացքում, որոնք գեղչվում են նույն դրույքով, որը որոշվել էր վարձակալության սկզբում: Վարձակալական պարտավորության հաշվեկշռային արժեքը նման ձևով վերանայվում է, երբ ապագա վարձավճարների փոփոխուն մասը, որը հիմնված է ինդեքսի կամ դրույքի վրա, նունպես վերանայվում է: Երկու դեպքում էլ կատարվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի համապատասպան ճշգրտում, որը (ակտիվը) ամորտիզացվում է վարձակալության մնացած (վերանայված) ժամկետի ընթացքում:

Երբ Ընկերությունը վարձատուի հետ վերափոխում է վարձակալության պայմանները, վարձակալի հաշվառումը կարող է փոփոխվել կախված նշված փոփոխության կամ փոփոխությունների բնույթից.

- Վարձակալը պետք է հաշվառի վարձակալության վերափոխումը որպես առանձին վարձակալություն, եթե վերափոխման արդյունքում մեծանում է վարձակալության գործողության ոլորտը՝ ավելացնելով մեկ կամ մեկից ավելի հիմքում ընկած ակտիվների օգտագործման իրավունք:
- Բոլոր մյուս դեպքերում, երբ վերափոխումը ավելացնում է վարձակալության գործողության ոլորտը (վարձակալության ժամկետի երկարացման կամ մեկ կամ մեկից ավելի հիմքում ընկած ակտիվների ավելացման միջոցով) վարձակալական պարտավորությունը վերաչափվում է վերափոխման ամսաթվի դրությամբ որոշված գեղչման դրույքի կիրառմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը ճշգրտվում է նույն գումարով:
- Եթե վերափոխման արդյունքում վարձակալության գործողության ոլորտը նվազում է վարձակալական պարտավորության հաշվեկշռային արժեքը և օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվում են հավասար հարաբերակցությամբ՝ արտացոլելու վարձակալության մասնակի կամ ամբողջությամբ դադարեցումը: Տարբերությունը ճանաչվում է եկամուտների և ծախսերի հաշվետվությունում: Վարձակալական պարտավորությունը դրանից հետո ճշգրտվում է նաև, որպեսզի նրա հաշվեկշռային արժեքը արտացոլի վերափոխված ժամկետի ընթացքում կատարվելիք վերափոխված վարձավճարները գեղչված վերափոխման ամսաթվի դրությամբ որոշված դրույքով: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը ճշգրտվում է նույն գումարով:

Վարձակալության բնույթը (վարձակալի հաշվառում)

Ընկերությունը վարձակալում է գրասենյակային տարածք Երևան քաղաքում, ՀՀ. Վարձակալությունը մեկնարկել է 2018թ. սեպտեմբերի 23-ին և ավարտվում է 23.09.2023թ.: Վարձակալությունը չեղարկվող չէ մինչև 2019թ. նոյեմբեր ամիսը: Ամսական վարձավճարը կազմում է 1,070 հազ. դրամ (ներառյան ուղղակի հարկերը):

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ

	Հող և շենքեր հազ. դրամ
1 հունվար 2019թ.	13,846
Ամորտիզացիա	(2,719)
31 դեկտեմբեր 2019թ.	11,127

Վարձակալական պարտավորություն

	Հող և շենքեր հազ. դրամ
1 հունվար 2019թ.	11,204
Տոկոսային ծախս	566
Վարձավճարներ	(11,770)
31 դեկտեմբեր 2019թ.	-

16. Պայմանական պարտավորություններ

Ընկերությունը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չի ունեցել կապիտալ ներդրումների գծով պարտավորություններ:

Ընկերությունը որևէ կողմի պարտավորությունների համար երաշխավորություն չի տրամադրել 31.12.2019թ. դրությամբ:

Ընկերության հանդեպ հարուցված դատական հայցեր 31.12.2019թ. դրությամբ առկա չեն:

17. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությանը կից ծանոթագրություններ

Դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդները ներկայացված են ստորև.

	2019 հազ. դրամ	2018 հազ. դրամ
Ընթացիկ հաշիվներ բանկերում	50,318	217,210
	50,318	217,210

18. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետևանքներ

Ընկերությունը ՖՀՄՍ 16-ին անցումը կատարել է 2019թ. հունվարի 1-ին: Ընկերությունը որոշել է չվերաներկայացնել համեմատական տվյալները նշված ստանդարտի ընդունման արդյունքում: Դրա պատճառով վերափոխված պահանջները չեն արտացոլվել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվություններում: Փոխարենը՝ նշված փոփոխությունները կատարվել են ստանդարտի առաջին որդեգրման ամսաթվին (2019թ. հունվարի 1-ին) և ճանաչվել են սեփական կապիտալի սկզբնական մնացորդում: ՖՀՄՍ 16-ի ընդունման ազդեցության մանրամասները բերվում են ստորև: IASB կողմից մշակված այլ նոր կամ փոփոխված ստանդարտները կամ մեկնաբանումները չեն ունեցել որևէ ազդեցություն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ դրանք

որևէ կերպ չեն վերաբերում Ընկերության գործունեությանը կամ պահանջում են հաշվառում, որը համահունչ է Ընկերության ներկա հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ:

ՖՀՄՍ 16 Վարձակալություն
Ուժի մեջ մտած 2019թ. հունվարի 1-ից ՖՀՄՍ 16-ը փոխարինել է IAS 17 *Վարձակալություն* և IFRIC 4 Պայմանագրում առկա վարձակալություն

ՖՀՄՍ 16 ներկայացնում է վարձակալի միասնական հաշվառման մոդել, որը պահանջում է ակտիվների և պարտավորությունների ճանաչում բոլոր վարձակալությունների գծով, ինչպես նաև տալիս է հնարավորություն բացառել կարճաժամկետ (մինչև 12 ամիս ժամկետով) վարձակալությունները և նրանք, որոնց հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է: ՖՀՄՍ 16-ը ներկայացնում է նույն էականապես պահանջները, ինչ որ ներկայացվում էր IAS 17-ի կողմից, ներառյալ ֆինանսական և գործառնական վարձակալությունների հաշվառման միջև տարբերությունները: Ընկերությունը չունի վարձով տրված ակտիվներ:

Անցման մեթոդ և գործնական մոտեցումներ

Ընկերությունն ընդունել է ՖՀՄՍ 16-ը հետընթաց՝ հաշվի առնելով սույն ստանդարտը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը՝ ճանաչված սկզբնական կիրառման ամսաթվին (2019թ. հունվարի 1) առանց վերաներկայացնելու համեմատական տվյալները: Ընկերությունն ընտրել է գործնական մոտեցումը՝ չվերագնահատելու արդյոք պայմանագիրը վարձակալական է կամ պարունակում է վարձակալության դրույթներ ստանդարտի սկզբնական կիրառման ամսաթվին: Այն պայմանագրերը, որոնք կնքվել են մինչև անցման ամսաթիվը, որոնք չեն համարվել վարձակալություն համաձայն IAS 17-ի և IFRIC 4-ի, չեն վերագնահատվել: Վարձակալության սահմանումը համաձայն ՖՀՄՍ 16-ի կիրառվել է միայն այն պայմանագրերին, որոնք կնքվել են կամ փոփոխվել են 2019թ. հունվարի 1-ին կամ հետո:

ՖՀՄՍ 16 ներկայացնում է որոշակի գործնական մոտեցումներ, ներառյալ նրանք, որոնք վերաբերում են ստանդարտի սկզբնական ընդունմանը: Ընկերությունը ՖՀՄՍ 16 ընդունման ժամանակ կիրառել է *հետևյալ գործնական մոտեցումները այն վարձակալությունների նկատմամբ, որոնք առաջիկայում* դասակարգվել են որպես գործառնական վարձակալություն.

(ա) Միասնական զեղչման դրույքի կիրառում համեմատելի պայմաններով վարձակալությունների պորտֆելին,
(բ) Սկզբնական ուղղակի ծախսերի բացառում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվարկում վարձակալության սկզբնական կիրառման ամսաթվին այն դեպքերում, երբ օգտագործման իրավունքի ձևով ակտիվը որոշվել է ՖՀՄՍ 16-ի պահանջներին համապատասխան վարձակալության սկզբում,
(գ) Նախկինում տրված ոչ հստակ վարձակալությունների գնահատումները որպես հիմք ընդունում, ինչը հնարավորություն է տալիս արժեզրկման գնահատական չիրականացնելու ստանդարտի առաջին կիրառման ամսաթվին, և
(դ) Բացառության կիրառում՝ չճանաչելու օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և պարտավորություն այն վարձակալությունների գծով, որոնց ժամկետը ստանդարտի առաջին *կիրառման ամսաթվին 12 ամից պակաս է:*
Որպես վարձակալ Ընկերությունը դասակարգել է իր վարձակալությունները որպես գործառնական և ֆինանսական իր գնահատականի հիման վրա, արդյոք էականորեն բոլոր ռիսկերը և օգուտները անցել են իրեն, թե ոչ: ՖՀՄՍ 16-ի համաձայն Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և պարտավորություններ իր վարձակալությունների մեծամասնության գծով: Սակայն Ընկերությունը ընտրել է չճանաչել վերոհիշյալ ակտիվները և պարտավորությունները

որոշակի վարձակալությունների գծով, որոնց հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է, նորոնք կարճաժամկետ են (12 ամիս և պակաս ժամկետով):

ՖՀՄՍ 16-ի ընդունման արդյունքում Ընկերությունը ճանաչել է հետևյալ օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալական պարտավորություն

Դասակարգում IAS 17	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	Վարձակալական պարտավորություն
Գործառնական վարձակալություն	Գրասենյակի տարածք՝ օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվել է վարձակալական պարտավորության գումարի չափով՝ ճշգրտված վարձակալական կանխավճարների կամ պարտքերի գումարներով	Չափվել է վարձավճարների ներկա արժեքով՝ զեղչված Ընկերության կողմից լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման դրույքով 2019թ. հունվարի 1-ի դրությամբ: Ընկերության կողմից լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման դրույքը հավասարվում է դրույքին, որով Ընկերությունը հնարավորություն ունի ներգրավել փոխառու միջոցներ անկախ փոխատուից: Հաշվարկներում կիրառվել է 12.0% միջին կշռված դրույքը:

ՖՀՄՍ 16-ի ընդունման ազդեցությունը 01.01.2019թ. Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա բերվում է ստոր.

31 դեկտեմբեր 2018

	ճշգրտում	Նախկինում ներկայացված Հազ. դրամ	ՖՀՄՍ 16 Հազ. դրամ	1 հունվար 2019 Հազ. դրամ
Ակտիվներ				
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	(ա)	-	13,846	13,846
Հետաձգված հարկային ակտիվ	(բ)	1,355	528	1,883
Պարտավորություններ				
Վարձակալական պարտավորություն	(գ)	-	11,204	11,204
Սեփական կապիտալ				
Չբաշխված շահույթ	(դ)	(27,527)	3,170	(24,357)

(ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ ճշգրտումը վերաբերում է միայն գործառնական տեսակի վարձակալություններին

(բ) Հետաձգված հարկային ակտիվը ճշգրտվել է՝ արտացոլելու վերոհիշյալ ճշգրտումը

(գ) Ներքո բերված աղյուսակը համադրում է նախորդ տարվա (31 դեկտեմբեր 2018թ.) ֆինանսական հաշվետվություններում բացահայտված նվազագույն վարձակալական վճարները և 01.01.2019թ. ճանաչված վարձակալական պարտավորության գումարները:

	1 հունվար 2019
	հազ. դրամ
Նվազագույն վարձավճարների գծով ապագա պարտավորություն	11,770
Հանած՝ կարճաժամկետ վարձակալությունները (չեն ճանաչվել ՖՀՄՍ 16 ներքո)	-
Հանած՝ վարձակալությունները, որոնց հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է (չեն ճանաչվել ՖՀՄՍ 16 ներքո)	-
Գումարած՝ մեծ հավանականությամբ հնարավոր երկարաձգման ազդեցություն	-
Չզեղչված վարձավճարներ	11,770
Հանած՝ զեղչման ազդեցությունը լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման դրույքով 01.01.2019թ. դրությամբ	(566)
Վարձակալական պարտավորություն 01.01.2019թ. դրությամբ	11,204

(դ) Չբաշխված շահույթը ճշգրտվել է՝ արտացոլելու վերոհիշյալ ճշգրտումների զուտ ազդեցությունը Ընկերության սեփական կապիտալի վրա

19. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընդհանուր դրույթներ

Կապակցված կողմերի հետ գործարքներն իրականացվել են կողմերի միջև համաձայնեցված պայմաններով, որոնք պարտադիր չէ, որ իրականացվեն շուկայական գներով: Տարեվերջի մնացորդի մնացորդները ապահովված չեն, առանց տոկոսների են և հաշվարկվում են կանխիկ եղանակով, բացառությամբ ստորև նկարագրվածի: Նման գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր հարկաբյուջետային տարի ՝ ստուգելով կապակցված կողմի ֆինանսական վիճակը և շուկան, որում վերջինս գործունեություն է ծավալում:

Կապակցված կողմերի հետ գործարքները 2019 և 2018 թվականների համար ներկայացված են ստորև:

	2019	2018
	հազ. դրամ	հազ. դրամ
Ստացված փոխառություններ (ծան. 12)	799,683	-
Տոկոսային ծախս ստացված փոխառությունների գծով	63,879	-

Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ (ծան. 6):

20. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Հիմնական գործունեությունից եկամուտ

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտները ճանաչվում են, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և եկամտի գումարը կարող է արժանահավատորեն չափվել: Տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով

արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների խմբի) ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային ծախսի և տոկոսային եկամտի բաշխման մեթոդն է:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը:

Այն դեպքերում, երբ տեղի է ունենում ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ակտիվների խմբի արժեքի նվազում արժեզրկումից կորստի հետևանքով, տոկոսային եկամուտն այդուհետև ճանաչվում է՝ կիրառելով այն տոկոսադրույքը, որը կիրառվել էր արժեզրկումից կորուստը չափելու նպատակով ապագա դրամական հոսքերը զեղչելիս:

Իրական արժեքով չափվող ակտիվների գծով ստացված տոկոսները դասակարգվում են որպես տոկոսային եկամուտ:

Ծառայության վճարների և միջնորդավճարների ճանաչումը

Վարկի տրամադրման վճարները հետաձգվում են հարակից ուղղակի ծախսումների հետ միասին և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում: Երբ հավանական է, որ վարկ տրամադրելու պարտավորությունը կհանգեցնի որոշակի պայմաններով վարկային համաձայնության, վարկային պարտավորության ստանձնման վճարները հետաձգվում են հարակից ուղղակի ծախսումների հետ միասին և հետագայում ճանաչվում որպես տրամադրված վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում: Երբ քիչ հավանական է, որ վարկ տրամադրելու պարտավորությունը կհանգեցնի որոշակի վարկային համաձայնագրի, վարկ տրամադրելու պարտավորության ստանձնման վճարները ճանաչվում են ֆինանսական արդյունքում վարկի տրամադրման պարտավորության մնացորդային ժամանակահատվածի ընթացքում: Այն դեպքում, երբ վարկ տրամադրելու պարտավորությունն ավարտվում է առանց վարկի տրամադրման, ապա վարկ տրամադրելու պարտավորության վճարները ճանաչվում են ֆինանսական արդյունքում՝ պարտավորության ավարտի պահին: Վարկի սպասարկման վճարները եկամտագրվում են, երբ համապատասխան ծառայությունները մատուցվում են: Բոլոր այլ միջնորդավճարները ճանաչվում են այն ժամանակ, երբ ծառայությունները մատուցվում են:

Արտարժութային գործարքներ

Ընկերության գործառնական արժույթից տարբեր արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակած փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվները և պարտավորությունները արտացոլվում են հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակած փոխարժեքով: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաչափումից գոյացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝

ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿՎ),

բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՀՖԱ),
գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:

Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաճչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՇԿՎ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՀՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես անելը վերացնում կամ նաշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե

•այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և
•սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
•դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:
Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

•· այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելո համար, և
•դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:
Պարտքային գործիք հանդիսացող և որպես ԻԱՇԿՎ չափվող չդասակարգված ֆինանսական ակտիվները ենթակա են արժեզրկվածության ստուգման՝ ակնկալվող պատքային կորուստների մոդելով: Ակնկալվող պարտքային կորստի մոդելի համաձայն՝ պետք է ճանաչվի պարտքային կորստի գծով պահուստ՝ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարքային կորուստների (ԱՊԿ) չափով: Սակայն, եթե գործիքի պարտքային ռիսկը դրա սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է, ապա պահուստը պետք է ճանաչվի գործիքի ամբողջ կյանքի ընթացքում ԱՊԿ չափով:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը.

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմած գրավադրված փոխառությունը:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» (ԻԱՇԿՎ) չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող Ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:
Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝
•այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
•սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
•այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեդջավորման գործիք:

Առևտրական նպատակներով չպահվող ֆինանսական պարտավորությունը կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես ԻԱՇԿՎ չափվող, եթե՝
•նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
• ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
•Այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգվում է որպես ԻԱՇԿՎ չափվող:

ԻԱՇԿՎ չափվող ֆինանսական պարտավորությունները ներկայացվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող օգուտները կամ կորուստները ճանաչվում են շահույթում կամ

վնասում, բացառությամբ իրական արժեքի փոփոխության՝ պարտավորության պարտքային ռիսկին վերագրելի մասից, որը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Այլ ֆինանսական պարտավորություններ

Այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:
Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում.

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Բաժնետիրական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես սեփական կապիտալ միայն այնքանով, որքանով դրանք չեն համապատասխանում ֆինանսական պարտավորությունների կամ ֆինանսական ակտիվների սահմանումներին:

Ընկերության սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալի գործիքներ:

Չեռք բերված ոչ նյութական ակտիվներ

Չեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով և հետագայում ամորտիզացվում են գծային մեթոդով օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում:
Ընկերության կողմից ճանաչված ոչ նյութական ակտիվները և դրանց օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Ոչ նյութական ակտիվ	Օգտակար ծառայության ժամկետ
Համակարգչային ծրագրեր	10 տարի

Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են, երբ դրանք դառնում են վճարման ենթակա. բաժնետերերին վճարվող միջանկյալ շահաբաժինների դեպքում՝ երբ դրանք հայտարարվում են տնօրենների կողմից, վերջնական շահաբաժինների դեպքում՝ երբ դրանք հաստատվում են բաժնետերերի կողմից տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ:

Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև առկա են տարբերություններ, բացառությամբ, եթե դրանք առաջանում են.

- գուդվիլի սկզբնական ճանաչումից:
- ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից և գործարքի ամսաթվի դրությամբ չեն ազդում ոչ հարկվող շահույթի, և ո՛չ էլ հաշվապահական շահույթի վրա:
- դուստր կազմակերպություններում և համատեղ վերահսկվող կազմակերպություններում ներդրումներից, որի դեպքում Ընկերությունն ի վիճակի է վերահսկել տարբերությունների հակադարձումը, և հավանական է, որ տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքում, երբ հավանական չէ, որ կառաջանա հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափում են՝ կիրառելով հարկային դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/(ակտիվները) կմարվեն/(կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են հարկերին, որոնք գանձվում են նույն հարկային մարմնի կողմից:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Հիմնական միջոցի ինքնարժեքը ձեռքբերման արժեքից բացի ընդգրկում է հիմնական միջոցին ուղղակիորեն վերագրելի ծախսումները և հիմնական միջոցի ապատեղակայման և քանդման ապագա անխուսափելի ծախսումների ներկա արժեքը: Համապատասխան պարտավորությունը ճանաչվում է որպես պահուստների:

Համակարգչային տեխնիկա – 100% տարեկան գծային մեթոդով
Գրասենյակային գույք – 12%-100% տարեկան գծային մեթոդով
Այլ - 10-100% տարեկան գծային մեթոդով

Պաշարներ

Պաշարները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով, իսկ հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, փոխարկման և պաշարները ներկայիս վայր և առկա վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Սովորաբար փոխարինելի համարվող բոլոր պաշարների ինքնարժեքի որոշման համար կիրառվում է առաջինը մուտք՝ առաջինը ելք բանաձևը (ԱՄԱԵ):

Ոչ ֆինանսական ակտիվների (բացառությամբ՝ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների) արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվների համար յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին իրականացվում է արժեզրկման ստուգում: Այլ ոչ ֆինանսական ակտիվների համար արժեզրկման ստուգում իրականացվում է, եթե առկա են հայտանիշներ, որ դրանց հաշվեկշռային արժեքը չի փոխհատուցվի: Եթե ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը (այն է՝ օգտագործման արժեքից և զուտ իրացման արժեքից առավելագույնը), ակտիվի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար նվազեցվում է:

Եթե հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, կազմակերպությունը պետք է արժեզրկման ստուգում իրականացնի դրամաստեղծ միավորի համար, որը տվյալ ակտիվը ներառող այն ակտիվների փոքրագույն որոշելի խումբն է, որոնց գծով դրամական հոսքերը առանձնացնելի են:

Արժեզրկման կորուստները ներառվում են շահույթում կամ վնասում՝ բացառությամբ այն դեպքի, երբ դրանք հակադարձում են նախկինում այլ համապարփակ ֆինանսական եկամուտում ճանաչված օգուտները: Գուդվիլի գծով ճանաչված արժեզրկումից կորուստը չի հակադարձվում:

Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերն և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ Ընկերության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

21. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

2020 թվականի հունվարի 30-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը («ԱՀԿ») հայտարարեց առողջապահական գլոբալ արտակարգ իրավիճակ Չինաստանի Վուհան քաղաքում ծագած կորոնավիրուսի նոր շտամի պատճառով («COVID-19 բռնկում»), ինչպես նաև նշեց միջազգային հանրության համար առկա ռիսկի մասին, քանի որ վիրուսը տարածվում է ողջ աշխարհում իր ծագման վայրից դուրս: 2020 թվականի մարտին ԱՀԿ-ն COVID-19-ի բռնկումը որակեց որպես պանդեմիա՝ հիմնվելով դրա համաշխարհային ազդեցության արագ աճի վրա:

COVID-19-ի բռնկման ամբողջ ազդեցությունը շարունակում է զարգանալ սույն հաշվետվության ամսաթվի դրությամբ: Որպես այդպիսին, անորոշ է, թե ինչ մասշտաբի ազդեցություն կունենա պանդեմիան Ընկերության ֆինանսական վիճակի, իրացվելիության և գործունեության հետագա արդյունքների վրա: Ղեկավարությունն ակտիվորեն հետևում է համաշխարհային իրավիճակի ազդեցությանն իր ֆինանսական վիճակի, իրացվելիության, գործառնությունների, հաճախորդների, գործունեության ոլորտի և աշխատուժի վրա: Հաշվի առնելով COVID-19 բռնկման ամենօրյա զարգացումները և դրա տարածման սահմանափակմանն ուղղված համաշխարհային գործողությունները՝ Ընկերությունն ի վիճակի չէ գնահատել COVID-19-ի բռնկման ազդեցությունն իր գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի կամ իրացվելիության վրա 2020 ֆինանսական տարվա համար:

COVID-19-ը կարող է ազդել հաճախորդների տրված վարկերի վրա, և, հետևաբար, դրանց վճարումը կարող է վտանգի տակ լինել: Բացի այդ, որոշ վարկառուներ կարող են ֆինանսական դժվարությունների բախվել, և այդ դեպքում Ընկերությունը կարող է այդ վարկառուների հետ մշակել նոր պայմաններ՝ փորձելով հավաքել վճարման ենթակա գումարները պայմանները փոխելու կամ վարկառուներին զիջումներ առաջարկելու միջոցով ակնկալվող կորուստները մեղմելու նպատակով: Հաճախորդներին տրված վարկերի հավաքագրելիությունը չափվում է վարկային կորուստների համար պահուստ ճանաչելու միջոցով: Եթե Ընկերությունն ընդունել է ՖՀՄՍ 9, Ֆինանսական գործիքներ, որի համաձայն ակնկալվող կորուստները ճանաչվում են՝ հիմնվելով պատմական փորձի, ներկայիս պայմանների և ողջամիտ ու հիմնավորված կանխատեսումների վրա, ապա COVID-19-ի հետևանքով կարող է անհրաժեշտություն առաջանալ այդ գնահատականներում, մասնավորապես՝ ակնկալվող կորուստների կանխատեսումներում ճշգրտումներ մտցնելու:

Չնայած Ընկերությունն այս պահին չի կարող գնահատել COVID-19-ի բռնկման ազդեցության տևողությունը կամ ծանրությունը, եթե պանդեմիան շարունակվի, ապա դա կարող է էական ազդեցություն թողնել Ընկերության 2020 ֆինանսական տարվա հետագա գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի և իրացվելիության վրա:

Հավելված Ա. Իրական արժեքի չափման բացահայտումներ

Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված է Մակարդակ 2-ում և 3-ում դասակարգվող իրական արժեքի չափման համար օգտագործված գնահատման մեթոդը, այդ թվում՝ հիմնական ոչ դիտարկելի ելակետային տվյալները, ինչպես նաև ոչ դիտարկելի ելակետային տվյալների և իրական արժեքի միջև փոխհարաբերությունը:

Հոդված	Իրական արժեք, հազար դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Տրված վարկեր	1,468,720	Վարկերի իրական արժեքը չափվում է՝ ապագա պայմանագրային դրամական միջոցների հոսքերը զեղչելով ներկա շուկայական տոկոսադրույքներով:	Մակարդակ 2	12-27% զեղչման դրույք
Դեբիտորական պարտքեր	4,284	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:	Մակարդակ 3	Չկան այդպիսիք
Կրեդիտորական պարտքեր	3,237	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:	Մակարդակ 3	Չկան այդպիսիք
Ստացված փոխառություններ	996,502	Վարկերի իրական արժեքը չափվում է՝ ապագա պայմանագրային դրամական միջոցների հոսքերը զեղչելով ներկա շուկայական տոկոսադրույքներով:	Մակարդակ 2	4% զեղչման դրույք